

ԱՐՄԿԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԿՈԿՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. ՇՆՉԵՂԱՑՈՒՄ ԵՎ ՎԱՆԿԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ

Հայերենում պայթականներն ու պայթաշփականները «ուժեղ» և «թույլ» համարվող դիրքերում ցուցաբերում են եռաշար (դ-տ-թ, բ-պ-փ, գ-կ-ք, ձ-ծ-ց և ջ-ճ-չ) կոկորդային հատկանիշներ: Հայերենի աղմկային բաղաձայնների համար վերջահար դիրքերը, հակառակ կոկորդայինների վերաբերյալ ընդունված համընդհանուր մոտեցումների, ամենևին էլ «թույլ» չեն: Մեր լեզվի հնչույթաբանության մեջ խոսքի ճանաչման/յուրացման անհրաժեշտ պայմաններով է թելադրվում արտաբերության վերջում [ձայնեղ] հատկանիշի *արտոնումը*: Կարևոր է, որ վերջադիր աղմկայինները հակադրական ձևայնություն պահպանեն իրենց ձայնային առանձնահատկությունները, հատկապես երբ նրանց միջոցով կազմավորվում են նվազագույն գույգեր, օրինակ՝ *վարկ-վարք, հաբ-հափ, հույս-հույզ, վախ-վաղ* և այլն: Արտաբերության վերջահար դիրքերում կոկորդային հատկանիշների պահպանումը միակ միջոցն է խոսող-խոսակից հարաբերություններում թյուրընկալումից խուսափելու համար: Վերջահար աղմկայինների թուլացման գործընթացները գործուն չեն հայերենում: Ավելին, լեզուն գործի է դնում «ամրացման» ուղղված միջոցներ. վերջահար դիրքերը ամրացվում են՝ *ձևայնների եզրերը (կամ սահմանները) և վանկասկզբի դիրքերը* սահմանազատելու նպատակով:

Սույն հոդվածում համապատասխան նյութերի և օրինակների հիման վրա առաջադրվում է այն վարկածը, որ հայերենում վերջահար դիրքերը կամ միջավայրերը հնչույթաբանական/հնչյունաբանական առումով մեծ տեղեկություն են պարունակում լեքսիկական¹ հակադրությունների և ձևայն/վանկ սահմանների վերաբերյալ:

Հայերենում աղմկային բաղաձայնների կոկորդային վարքագծի քննարկումն այստեղ ծավալվում է երկու ուղղությամբ. առաջին՝ չթուլացող վերջահար դիրքերի վերլուծությունը կատարվում է «Ազդանշանի արտոնման» (*Cue Licensing*) սկզբունքով և երկրորդ՝ ամրացման գործընթացներն ու Աղմկային₁Աղմկային₂ (Ա₁Ա₂) բաղաձայնական խմբերի առնմանության փաստերը հիմնավորվում են «Չափական արտոնման» (*Prosodic Licensing*) սկզբունքով:

Կոկորդային առնմանություն տեղի է ունենում նախաաղմկային միջավայրերում: Հայերենում առնմանության *հետընթաց* բնույթը, ինչպես կտես-

¹ Լեզվի տեսության ժամանակակից դրույթներից ելնելով՝ սույն ուսումնասիրության մեջ *լեքսիկական* միավորներ են համարվում ոչ միայն բառերը, այլև դրանցից փոքր (ձևայններ) և մեծ (չափական բառեր, բառակապակցություններ, հարադրություններ, դարձվածքներ) տիրույթներ զբաղեցնող լեզվական միավորները:

նենք, պայմանավորված է լեզվի վանկաչափական առանձնահատկություններով:

Չորվածում քննարկվում են հետևյալ խնդիրները. 1) պայթաչփական ու շնչեղ խուլ բաղաձայնների հատույթային կարգավիճակը, 2) հայերենի վանկային կառուցվածքն ու կոկորդային գործընթացներում վանկաչափության դերը, 3) [ձայնեղ] հատկանիշի պահպանումը բառավերջի աղմկայինների ընկալման տեսակետից կարևոր ձայնային հակադրություններում, 4) *շնչեղացումը*² որպես վանկասկզբային դիրքերը «ամրացնող» կամ «ուժեղացնող» գործընթաց, 5) կոկորդային միջավայրերում առկա շնչեղացման տարբեր գործառույթներ ու վերլուծության արժանի կոկորդային առնմանության մի շարք փաստեր և 6) ձայնորդների չեզոք վարքագիծը առնմանության գործընթացներում:

Պայթաչփական ու շնչեղ խուլ բաղաձայնների հատույթային կարգավիճակը

Հայերենի բաղաձայնական հատույթների կազմը, ըստ հայերեն և միջազգային հնչյունաբանական այբուբենի (IPA) գրանշանների, հետևյալն է.

(1)

բ (b)	պ (p)	փ (p ^h)	վ (v)	ֆ (f)	մ (m)	լ (l)	ր (r)
գ (g)	կ (k)	ք (k ^h)	զ (z)	ս (s)	ն (n)		ռ (R)
դ (d)	տ (t)	թ (t ^h)	ժ (ʒ)	ջ (ʃ)			
ձ (dz)	ժ (ts)	ց (t ^h s)	ղ (ʎ)	խ (x)			
ջ (dʒ)	ճ (tʃ)	չ (t ^h ʃ)		հ (h)			

Հայերենի բաղաձայնները ավանդաբար դիտվել են որպես «պարզ» և «բարդ»²: «Պարզ» բաղաձայնները այսպես կոչված «մաքուր» պայթականներն են՝ *պ, տ, կ, բ, դ, գ*, իսկ «բարդ» բաղաձայնները՝ շնչեղ խուլ պայթականներն (*փ, թ, ք*) ու պայթաչփականների բոլոր շարքերը (*ձ, ժ, ց, ջ, ճ, չ*): Այս մոտեցման համաձայն, որը, ի դեպ, համալեզվական երևույթ է, **փ** (p^h) հնչյունն, օրինակ, դիտվում է որպես **պ** և **հ** (p^h= p+h), **թ**-ն՝ **տ** և **հ** (t^h= t+h)³, **ժ**-ն՝ **տ** և **ս** (ts= t+s), **չ**-ն՝ **թ** և **ջ** (t^hʃ = t^h+ʃ) հնչյունների կապակցություն և այլն: Հիմնվելով արդեն իսկ գոյություն ունեցող որոշ ուսումնասիրությունների վրա⁴, փորձենք ցույց տալ, որ «բարդ» բաղաձայնները հայերենում մենահատույթ տարրեր են, և հնչույթաբանորեն դրանք պետք է քննվեն որպես այդպիսիք: Նման պնդումը հիմնված է հետևյալ փաստերի վրա:

ա. Հայերենում, ինչպես հայտնի է, բառասկզբում բաղաձայնական

² Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974, էջ 72:

³ Տե՛ս **Kim, C. - W.**, A Theory of Aspiration., *Phonetica* 21, 1970, էջ 107-116:

⁴ Տե՛ս **Ա. Խաչատրյան**, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Եր., 1988, **Ревзин И.** Критерии мономорфности или биморфности сегмента // «Вопросы фонологии и фонетики». Монреаль, 1971, **Lombardi, L.**, *Laryngeal features and laryngeal neutralization*. Garland Publishing, Inc., New York & London, 1994:

խմբերը և հատկապես պայթական-շփական զուգորդություններն անընդունելի են⁵, մինչդեռ բազմաթիվ բառեր սկսվում են շնչեղ խուլերով ու պայթաշփականներով: Այս փաստն, անշուշտ, չի հակասում բառասկզբի սահմանափակման սկզբունքին (*[CC—) այն դեպքում, եթե խնդրո առարկա բաղաձայնները դիտվում են որպես մենահատույթներ: Հայերենում չկա հնչույթաբանական մի միջավայր, որտեղ պայթաշփականների կամ շնչեղ խուլերի շարքերից որևէ հատույթ հանդես գա որպես բաղադրյալ միավոր: Խորքային [CC— խմբերը մակերեսում սովորաբար հայտնվում են պարտադիր գետեղվող գաղտնավանկային ը-ով: Եթե չ /t^hf/ հատույթը բաղկացած լիներ /թ/ և /շ/ t^hf = t^h+f առանձին հատույթներից, ապա չափ, չորս, չինար բառերը պետք է ընդունեին մակերեսային *թըշափ /t^həʃap^h/, *թըշորս /t^həʃɔrs/, *թըշինար /t^həʃinar/ ձևերը, որն իհարկե երբևէ տեղի չի ունենում: Մյուս կողմից, /թ/ և /շ/ ինքնուրույն հատույթների զուգորդությունը հնչյունաբանական մակարդակում մշտապես ունենում է [թըշ...] ձևը, ինչպես, ասենք՝ [թըշվառ], [թըշնամի], [թըշիկ] և նման այլ բառերում:

բ. Վանկային սահմանագծերում պայթաշփական կամ շնչեղ խուլ բաղաձայններ ունեցող բառերի վանկատումից այդ բաղաձայնների բաղադրիչները երբեք չեն գատվում, այլ դիրք են զբաղեցնում վանկի աջ կամ ձախ թևում՝ անվերապահորեն ենթարկվելով *հնչեղության հաջորդականության սկզբունքին*։⁶

(2)

σ	σ		*	σ	σ	σ
/ /	/ /		/ /	/ /	/ /	
O N	O N O		O N	O N	O N O	
x x	x x x		x x	x x	x x x x	
p ^h u . t ^h f i k			p ə . h u t ^h f i k			

փ ու . չի կ

պը . հութ . շի կ

Պայթականների մենա- կամ երկհատույթային հատկանիշները պարզելու նպատակով սովորաբար կիրառվում է *ներածանցման/ներմասնիկավորման (infixation) մեթոդը*: Ռուսերենի համար, օրինակ, Ռևզինը առաջարկում է հետևյալ փորձը. եթե բաղադրիչ տարրերի միջև գետեղված ը-ն բառիմաստը չի փոխում, ապա գործ ունենք երկու առանձին հատույթների հետ: Հակառակ դեպքում՝ քննարկման առարկա պայթաշփականը (ռուսերենում շնչեղ խուլերի դասը բացակայում է) մենահատույթ է⁷: Իրոք, ռուսերենում ձաչ /dʒaz/ [-dʒəzʌ], ձչյնցլի /dʒungli/ [-dʒʌngli] բառերը ը-ով արտասանելիս չեն փոխում իրենց իմաստները, իսկ կամբոջերենում շնչեղ խուլերը համարվում են C + h զուգորդություններ: Ըստ Լոմբարդիի՝ վերջիններս իրոք երկհատույթ խմբեր են, քանի որ բաղադրիչները ներածան-

⁵ Տե՛ս **Յ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 81:

⁶ **Չնչեղության հաջորդականության սկզբունքը (Sonority Sequencing Principle)** հիմնվում է վանկերում հատույթների հնչեղության հատկության վրա, որը ենթադրում է հնչեղության աճ մինչև վանկի գագաթը, այնուհետև՝ անկում:

⁷ Տե՛ս **Ревзин И.**, նշվ. աշխ., էջ 221-222:

ցով բաժանելի են: Մեմահատույթի նկատմամբ *ներածանցի (մասնիկի և այլն)* զետեղումը այլապես անհնար է⁸.

(3)

-am- ներածանցի զետեղում	
<u>khəŋ</u> «գայրանալ»	<u>kamhəŋ</u> «գայրույթ»
<u>khaat</u> «կորցնել»	<u>kamhaat</u> «կորուստ»

Հայերենում անհնար է մասնիկի զետեղումով բառիմաստը չաղավաղել, ավելին՝ շնչեղ խուլերն ու պայթաշփականները իրենց «բաղադրիչներով» կարող են նույնիսկ կազմել հակադրություններ⁹.

(4)

t + s հմմտ. ts		t + h հմմտ. t^h	
/krt.ser/	/krtser/	/thas/	/t ^h as/
[kərt.ser]	[kərtser]	[tə.has]	[t ^h as]
կրտսեր	կրծեր	տհաս	թաս

գ. Հայոց այբուբենը հիմնականում հնչույթային է: Այն կազմված է միանիշ միավորներից (տառերից/գրույթներից), որոնցով գրվում են շնչեղ խուլերն ու պայթաշփականները՝ Թ, Փ, Չ, Ջ և այլն: Կարելի է ենթադրել, որ վերջիններիս մեմահատույթ բնույթը ամրագրվում է նաև ուղղագրությանը: Այս փաստը, թեև ոչ այնքան հիմնավոր, որքան նախորդները, այնուամենայնիվ հաստատում է այն տեսակետը, որ հայերենում շնչեղ խուլերն ու պայթաշփականները բնագոյրեն ընկալվում են որպես մեմահատույթներ:

Վանկային կառուցվածքն ու կոկորդային բաղաձայնների վարքագիծը

Կոկորդային հակադրությունների միջավայրերն ու համապատասխան հնչյունային փոփոխությունները վերլուծելու համար կարևոր է անդրադառնալ հայերենի վանկային կառուցվածքի առանձնահատկություններին ու կոկորդային գործընթացներում դրանց ունեցած դերին:

Հայերենում նվազագույն լիմաստ բառերը կարող են ունենալ CV և/կամ (C)VC կաղապարներ՝ *ծու, բու, թի, լու* և/կամ *գահ, թառ, բակ, ջուր, գուռ, դուռ, ափ, օդ, օձ* և այլն: Շեշտը կայուն պարբերական բնույթի է, այն սովորաբար ընկնում է բառի վերջին/վերջընթեր վանկի լրիվ ձայնավորի վրա: Շեշտով էլ պայմանավորվում է չափական ոտքի բնույթը: Հայերենում հնչույթաբանական ոտքը յանբական է. ոտքի հիմնամասը աջակողմյան է, և ոտքերի կազմությունը տեղի է ունենում աջից՝ ձախ: Այսպիսով, անկախ ձևաբանական ածանցման տեսակից, վերջադիր ոտքը (որը միաժամանակ նույնացվում է ոտքի հիմնամասի հետ) պետք է ունենա նվազագույն բառի կառուցվածք, այն է՝ CV կամ (C)VC, որպեսզի կարողանա բավարարել ոտքի հիմնամասի պայմանը¹⁰: Սույն ուսումնասիրության մեջ **բառավերջի մեմահատույթ բաղաձայնի վանկատման երկու հնարավոր մեխա-**


⁸ Տե՛ս Lombardi, L., նշվ. աշխ., էջ 122:

⁹ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁰ Տե՛ս McCarthy, J. J. & A. S. Prince, Prosodic Morphology (1986) In: *Phonological Theory: The Essential Readings*, Blackwell Publishers, Oxford, UK, 1999, էջ 238-289:


Ուղղանկյունի հայերենի համար գործում և տեսականորեն ընդունելի է համարվում վանկասկզբային մեխանիզմը¹¹: Սա մասամբ հիմնավորվում է նաև վանկային հանգի կառուցվածքային առանձնահատկությամբ. հայերենը չունի ո՛չ երկար ձայնավորներ և ո՛չ էլ երկհնչյուններ, հետևաբար **ձևաբանական I մակարդակում**, այսինքն՝ **արմատի ձևաբանության** մակարդակում, հանգերն ունեն առավելագույնը երկճյուղ դիրքեր.

(5)



Հայերենում բառավերջի հնարավոր կադապարներն են՝ V(C) և VCC: Ո՛չ բառավերջում և ո՛չ էլ վանկավերջում դրվող բաղադրիչային մեկ դիրք զբաղեցնող բաղաձայնների վրա որևէ սահմանափակում չկա: Այսինքն՝ բառավերջի բոլոր նայերը, ռեզայիններն ու աղմկայինները կարող են հնարավոր վանկասկիզբ լինել: Գոուդն ու Քանգը վերջադիր բաղաձայնների (որպես պոտենցիալ վանկասկիզբ) վերլուծության երկու կառուցվածք են առաջադրում¹²: Նրանց կարծիքով, վերջադիր բաղաձայնը կարող է հանդիսանալ՝ **ա) բացակա միջուկով վանկերի վանկասկիզբ (ԲՄՎՎ) կամ բ) վանկասկիզբ - միջուկ կապի բաղադրիչ (ՎՄՎԲ), օրինակ՝**

(6)



Հայերենին առավել համապատասխանում է վերլուծության երկրորդ տարբերակը, քանի որ լեզվում հնարավոր շատ բառեր կազմում են նաև CVCV շարքեր, օրինակ՝ [գաթա], [հիմա], [տըղա], [մեղո՛ւ], [կատո՛ւ], [գինի], [բարի], [վըկա], [քամի] և այլն: «Կառավարման հնչույթաբա-

¹¹ Տե՛ս **Յ. Հովհաննիսյան**, Վանկը որպես հնչույթաբանական վերլուծության բաղադրիչ, թեկն. ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Եր., 2012:

¹² Տե՛ս **Goad, H. & H.-S. Kang**, Word – final syllabification in L2 acquisition with emphasis on Korean learners of English, In: *Proceedings of the 6th Generative Approaches to Second Language Acquisition Conference (GASLA)*, Somerville, MA: Cascadilla Proceedings Project, 2003, էջ 122:

նության» մեջ ընդունված է, որ վանկավերջի բաղաձայնի վանկասկզբային կարգավիճակը «արտոնվում է» նրան հաջորդող դատարկ միջուկի կամ ձայնավորական հենարանի դիրքով¹³: Հայերենի դեպքում վերոհիշյալ միջուկի դիրքը պարտադիր չէ, որ դատարկ լինի: Բացի դրանից, հայերենի քերականության մեջ քննարկվող դիրքը զուգորդվում է պոտենցիալ շեշտակիր դիրքի հետ: Հաշվի առնելով այն իրողությունը, որ լեզուն ունի կայուն վերջնավանկային շեշտ, կարելի է ենթադրել, որ այն այդպիսին է արտասանական-հնչյունական, այսինքն՝ մակերեսային մակարդակում, մինչդեռ ձևաբանական-հնչյութաբանական վերլուծության տեսակետից ակնկալվում է, որ շեշտը (ունենալով պարբերական բնույթ) շարժվելու է դեպի աջ՝ դեպի նախորդ ածանցման ընթացքում դեռևս դատարկ միջուկի արդեն իսկ զբաղեցված դիրք: Ստորև բերվում են բաղաձայնով և ձայնավորով վերջացող նվազագույն բառեր, որոնք բառափոխական հաջորդական փուլերում ստանում են համապատասխան շեշտադրություն.

(7)

ա. (C)VC-ով բառավերջ <i>CV.C□' V.C□'</i>		բ. CV-ով բառավերջ <i>CV. (C) □'</i>
<i>թա. գ□</i>	<i>ա. փ□</i>	<i>թի'. (C) □</i>
<i>թա. գե'. ր□</i>	<i>ա. փե'. ր□</i>	<i>թի. (C) ա'. կ□</i>
<i>թա. գե. րի'</i>	<i>ա. փե. րում</i>	<i>թի. ([I]) ա .կի'</i>

Մասնիկավորման յուրաքանչյուր փուլում վերջին բաղաձայնը տեղափոխվում է հաջորդ վանկ՝ գրավելով վանկասկզբի դիրք, իսկ եթե այդ վանկը նաև բառի վերջին վանկն է, միջուկի դիրք է գրավում շեշտակիր (չափական ոտքի հիմնամասը հանդիսացող) ձայնավորը: Մեկ այլ հայտնի փաստ. ի պաշտպանություն հայերենում վերջնաբաղաձայնը վանկասկիզբ նշանակելու և հայերենը «վանկասկզբային վերլուծության» լեզու համարելու տեսակետի կարող ենք վկայակոչել Գոուդի ու Քանգի հետևյալ եզրահանգումը. «...(Ա)րտամղման հատկանիշներն են սահմանում աջակողմյան վանկասկզբի վանկատման ԲՄՎ կամ ՎՄԿ կարգավիճակը: Այն լեզուներում, որոնցում վերջնաբաղաձայնները վանկատվում են որպես վանկասկիզբ, այդ բաղաձայնները, հնչյունաբանորեն զբաղեցված միջուկներին նախորդող բաղաձայն-վանկասկզբին զուգահեռ, մշտապես արտաբերվում են բաց արտամղումով: Մենք սա համարում ենք ամրացում կամ ուժեղացում: Բաց արտամղումը ազդանշան է այն բանի, որ վերջնաբաղաձայնի հատկանիշային բովանդակությունը տարածվել է դատարկ միջուկի վրա»¹⁴:

Նրանց կարծիքով, նման լեզուները (եվրոպական ֆրանսերենը, յափերենը և այլն) ունեն *ՎՄԿ* կառուցվածք: Ինչպես ցույց կտրվի ստորև, հայերենում ևս տեղի են ունենում ամրացման կանոնավոր գործընթացներ,

¹³ Տե՛ս Harris, J. & E. Gussmann, Final codas: why the west was wrong. In: *Structure and interpretation in phonology: studies in phonology*, Lublin: Folia, 1998, էջ 139-162, Brockhaus, W., *Final Devoicing in the Phonology of German*. Tübingen: Max Niemeyer Verlag, 1995, Kaye, J., Coda licensing, *Phonology* 7, 1990, էջ 301-330 և այլն:

¹⁴ Goad, H. & H.-S. Kang, նշվ. աշխ., էջ 124:

հետևաբար հայերենը ևս լիովին ենթակա է նման վերլուծության: Ավելին, հայերենը որպես վանկասկզբային լեզու ընդունելը հնարավոր է դարձնում բացատրել առաջին հայացքից «անբնական» կամ «բացառիկ» թվացող կոկորդային իրողությունները:

Վերջադիր [ծայնեղ] հատկանիշը՝ արտոնված

Եռաշար կոկորդային տարբերակումների առկայությունն ու մեծաթիվ ձևաբանական հակադրություններում դրանց կատարած դերի կարևորությունը ենթադրում են, որ բնիկ հայախոսներն այդ հակադրությունները պահպանելու նպատակով բանեցնում են հատուկ հնչյութաբանական ու հնչյունաբանական մեխանիզմներ: Հնչյութաբանություն – հնչյունաբանություն արտապատկերման հետևանքով երբեմն ի հայտ են գալիս այսպես կոչված «անբնական» փաստեր¹⁵, որոնք մարտահրավեր են նետում համալեզվական հանրահայտ փաստերին: Նման «անբնական» փաստ է այն, որ հայերենում արտաբերության վերջահար դիրքերում ձայնեղ աղմկայինները չեն խլանում կամ չեզոքանում: Ոչ միայն *վերջահար աղմկայինների խլացում* (ՎԱԽ), այլև հնչյունական թուլացման այլ փաստեր, ինչպիսիք են շփականացումը (spirantisation), ըմպանայնացումը (glottalisation), ձայնավորացումը (vocalisation), դեբուկալիզացիան (debuccalisation)՝ բերանի նախախորշային մկանների թուլացումը, չկան հայերենի հնչյութաբանական քերականության մեջ: Լոմբարդին կարծում է, որ բոլոր այն լեզուներում, որտեղ *ծայնեղության սահմանափակումը*¹⁶ բառավերջում ձայնեղության չեզոքացման չի հանգեցնում, «վերջնաբաղաձայնները ցուցաբերում են բացառիկ վարքագիծ»¹⁷: Հայերենում [ծայնեղ] հատկանիշը պահպանվում է ոչ միայն պայթականների ու պայթաշփականների, այլև շփականների դեպքում. օրինակ՝ սա[զ], բա[ղ], քա[ջ], գան[ծ], ծո[վ], դե[ղ], թու[զ], խե[ժ] և այլն: Բառավերջի ձայնեղ աղմկայիններն իրենց համարժեք խուլերի հետ կազմում են բազմաթիվ հակադրական զույգեր.

(8)

ուղ - ութ	հավ-հաֆ
անող-անոթ	ող-ոխ
հող-հոտ	ուժ-ուշ
մազ-մաս	կաղ-կախ
փող-փոխ	ցեղ-ցեխ

Ի տարբերություն նախաձայնավորական և միջձայնավորական աղմկայինների՝ նախա- և վերջադիր աղմկայինները չունեն հիմնական VOT¹⁸ ազդանշաններ: Այդուհանդերձ, բառավերջի *հետձայնավորական*

¹⁵ Տե՛ս Iverson, G. & J. Salmons. On the typology of final laryngeal neutralization: evolutionary phonology and laryngeal realism. *Theoretical Linguistics* 32:2, 2006, էջ 205 – 216:
¹⁶ Չայնեղության սահմանափակման պայմանի համաձայն՝ բառավերջի/վանկավերջի խորքային ձայնեղ բաղաձայնները մակերես են ելնում առանց [ծայնեղ] հատկանիշի:
¹⁷ Lombardi, L., նշվ. աշխ., էջ 30:
¹⁸ VOT (Voice Onset Time). լայնորեն կիրառվում է հնչյունաբանական վերլուծության մեջ և նշանակում է պայթյունի պահից սկսած՝ ձայնի ներգրավման ժամանակը (տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 148):

աղմկայինները ձայնային տարբերակումների առումով ավելի բարենպաստ միջավայրում են, քան *նախաաղմկային* դիրքում գտնվողները այն իմաստով, որ «V— #¹⁹ դիրքը առավելություն ունի — **Աղմկային** դիրքի նկատմամբ՝ հակադրվող ձայնեղություն հայտնաբերելու համար տրվող առավել մեծ քանակի ազդանշանների տեսակետից»²⁰:

Հայերենում CC խմբերին սովորաբար նախորդում են ձայնավորներ, քանի որ բաղաձայնական կուտակումները լեզվի համար անհանդուրժելի են: Այսպիսով, հայերենում հետձայնավորական վերջադիր պայթականներն ունեն ձայնեղության բոլոր այն ազդանշանները, ինչ նախաաղմկային պայթականները. դրանք են՝ փակումային ձայնեղացում, փակվածքի տևողություն, նախորդող ձայնավորի F₁ արժեքներ, ձայնավորի տևողություն և այս ամենին գումարած՝ մեծ հավանականություն ունեցող լսելի պայթյուն: Հայերենում վերջադիր պայթականներն արտաբերվում են ցայտուն արտանդումով, հետևաբար, — **Աղմկ.** դիրքի համեմատ վերջադիր պայթականներն ունեն ձայնեղացման ավելի շատ ազդանշաններ, որոնք հաղորդվում են դադարին նախորդող պայթյունի տևողության և ամպլիտուդի միջոցով: Հայերենում, ինչպես ասենք՝ անգլերենում, նախորդող ձայնավորի հարաբերական ժամանակի ազդանշանները կարևոր դեր են կատարում ձայնային տարբերակումների վերականգնման համար: Ձայնավորը համեմատաբար ավելի երկար է չեզոք աղմկայիններից կամ ձայնորդներից առաջ, քան լարված աղմկայիններից առաջ²¹:

(9)

ՀԱՅԵՐԵՆ	ԱՆԳԼԵՐԵՆ				
շտա[պ]-շտա[բ]	ca[p]	«կեպի»	—	ca[b]	«տաբսի»
հա[փ]-հա[բ]	sla[p]	«սպտակ»	—	sla[b]	«սալաբար»
հո[տ]-հո[դ]	co[t]	«օրորոց»	—	co[d]	«ծողածուկ»
յո[թ]-յո[դ]	ba[t]	«չղջիկ»	—	ba[d]	«վատ»
թա[բ]-թա[գ]	clo[k]	«ժամացույց»	—	clo[g]	«փայտե կոշիկ»
մե[կ]-մե[գ]	pe[k]	«կտցել»	—	pe[g]	«սեսպ»

Ստորև բերվում է Քենստովիչի, Աբու-Մանսուրի և Թորքենգիի կողմից առաջադրվող աղմկայինների ձայնային հակադրությունների միջավայրերի ստորակարգական պատկերը²²:

(10) * [±ձայնեղ]/_ [- ձայնորդ] >> * [±ձայնեղ]/_ # >> * [± ձայնեղ]/_ [+ձայնորդ]

Հայերենի աղմկայինների համար սահմանափակումների դասակարգումը (**հունգարերենի ու յիդիշի նման**) ստանում է հետևյալ հաջորդականությունը.

(11) * [±ձայնեղ]/_ [- ձայնորդ] >> Պահպանել [ձայնեղ] >> * [± ձայնեղ]/_ # >> * [± ձայնեղ]/_ [+ձայնորդ]

¹⁹ # նշանով ցույց է տրվում բառի/ձևույթի սահմանը:

²⁰ Steriade, D., Phonetics in Phonology: The Case of Laryngeal Neutralization, Ms., University of California, Los Angeles, 1997, p. 47.

²¹ Steu Harris, J., English sound structure. Oxford: Blackwell, 1994, էջ 136:

²² Steu Kenstowicz, M., Abu-Mansour, M., and M. Törkenczy Two notes on laryngeal licensing, 2003, էջ 273: http://web.mit.edu/linguistics/people/faculty/kenstowicz/laryngeal_licensing.doc

Ամրացումը/ուժեղացումը որպես «չեզոքացման» գործընթաց

Հայերենում վերջադիր միջավայրերը ակնհայտորեն թույլ չեն: Վերջիններիս մասին նման կարծիք է արտահայտվում նաև Ա. Խաչատրյանի «Ժամանակակից հայերենի հնչույթաբանությունը» աշխատության մեջ²³: Մի կողմից՝ գործ ունենք փաստացի հնչույթաբանական իրողության հետ, մյուս կողմից՝ գոյություն ունեն մեծ թվով բառեր, որոնցում վերջադիր ձայնեղ պայթականները ենթարկվում են շնչեղացման: Այվերսոնն ու Սամոնզը շնչեղացման այս գործընթացը նկարագրում են որպես հատկանիշի *հավելում* (ի հակադրություն հատկանիշի *զեղչման*) և կարծում են, որ դա, այնուամենայնիվ, «աղմկայինի չեզոքացման» երևույթ է, որը որոշ լեզվական համակարգերում (հիմնականում՝ գերմանական լեզուներում) կրում է «վերջահար ամրացման» բնույթ²⁴: ՎԱԽ լեզուներում կոկորդային հակադրությունները չեզոքանում են որոշակի տիրույթի սահմաններում վերջահար դիրքի [ձայնեղ] հատկանիշի անջատումով, իսկ այլ լեզուներում վերջահար դիրքերը չեզոքանում են՝ [ձգված ձայնաճեղք] հատկանիշի հավելումով.

(12)

Վերջադիր խլացում		/d, t/ → [t]	(դանիերեն, լեհերեն, մալթերեն)	
[d] _σ	Հնչույթային հակադրություն	/d/	/t/	
≠				
[ձայնեղ]		[ձայնեղ]	[]	
Վերջադիր ամրացում		/t ^h , t ~ d/ → [t ^h]	(գերմաներեն, կաշմիրի, վաշո)	
[t] _σ	Հնչույթային հակադրություն	/t ^h /	/t/ (կամ /d/)	
↑				
[ձգված]		[ձգված]	[]	

(Iverson & Salmons 2007: 125)

Դատելով շնչեղացման բնույթից՝ հայերենում այս գործընթացը կարելի է համարել վերջադիր ուժեղացում, իսկ հայերենն էլ դասել «շնչեղացման» լեզուների շարքը: Այն, որ եռաշար կոկորդային տարբերակումներ ունեցող լեզուն իրականացնում է վերջահար դիրքերի ամրացում, կարելի է հիմնավորել հայերենում առկա հակադրական ձևայինների առատությամբ: Ակնհայտ է, որ վերջադիր ամրացումը տիրույթների (բառերի, վանկերի) սահմանները հստակորեն ու ճշգրտորեն արտահայտելու ավելի հուսալի մեխանիզմ է, քան վերջադիր խլացումը: Վոքսն ու Սամուելզը կարծում են, որ ցանկացած (Դ, Տ, Թ) համակարգում (Դ : Թ) հակադրությունն ավելի դյուրին է ընկալվում, քան (Դ : Տ)-ն²⁵: Թե՛ երկշար և թե՛ եռաշար հակադրություն ունեցող լեզուներում կիրառվում է վերջադիր ամրացման մեխանիզմը՝ «...ձայնեղ և խուլ հնչույթային դասերի միջև ձայնաբա-

²³ Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 103:

²⁴ Տե՛ս Iverson, G. & J. Salmons, Domains and directionality in the evolution of German final fortition. *Phonology* 24, 2007, էջ 121-145:

²⁵ Տե՛ս Vaux, B. & B. Samuels, Laryngeal markedness and aspiration. *Phonology* 22, 2005, էջ 395-436:

նական (ակուստիկ)-հնչյունաբանական տարածությունը մեծացնելու և ընկալման ժամանակ նրանց հակադրությունը ընդգծելու նպատակով»²⁶: Յետևելով Վոքսին՝ սույն աշխատանքում ևս շնչեղ խուլերի շարքերը հայերենում դիտվում են որպես «նվազագույնս նշույթավորված», իսկ ոչ շնչեղ՝ պարզ խուլերի շարքերը՝ «նշույթավորված»: Այս եզրակացությունը հիմնվում է հնչյունաբանական բազմիցս փորձված այն իրողության վրա, որ ձայնեղ պայթականների շարքը պահանջում է «հատուկ մկանային վերահսկողություն և VOT-ի համաժամանակյա զուգակցում», ոչ շնչեղ խուլերի շարքը պահանջում է VOT-ի «ճշգրիտ կարգավորում», մինչդեռ շնչեղ խուլերի շարքը կարիք չունի ցուցաբերելու վերը նշված «հսկողության» կամ «կարգավորման» տեսակներից և ոչ մեկը²⁷:

Հայերենում շնչեղացումը նախասկզբնական, միջձայնավորական և բառավերջի/ձևույթավերջի դիրքերում կատեգորիական նշանակություն ունի: Վերոհիշյալ դիրքերում նրա *հնչույթաբանական* գործառույթը կոկորդային հակադրությունների արտացոլումն է, ինչպես նաև լեզվաբանական տիրույթների սահմանների ազդարարումը: Շնչեղացման հնչյունաբանական կողմը դրսևորվում է արտաբերության սահմանագծերի հատվածներում, ինչպես նաև **Ա,Ա₂** որոշակի միջավայրերում՝ որպես մեկ հնչույթից մյուսին անցման բնական հետևանք:

Շնչեղացման կոկորդային գործառույթները

(ա) Հակադրական գործառույթ

Հայերենում առկա հակադրությունները բնորոշ են թե՛ «շնչեղացման» (գերմաներեն, անգլերեն, շվեդերեն) և թե՛ «ձայնեղացման» (ֆրանսերեն, ռուսերեն, հունգարերեն) լեզուներին: Նախասկզբնական, միջանկյալ և վերջահար բոլոր դիրքերն էլ բառերում կոկորդային տարբերակումների համար հնարավոր դիրքեր են: Ստորև բերվող (տես 13ա և 13բ) օրինակների «ուժեղ» դիրքերը, շնորհիվ հիմնական VOT ազդանշանների (և ի լրումն այլ հնչյունաբանական ու հնչույթաբանական գործոնների), ձայնային տարբերակումների համար համալեզվական սկզբունքներով/փաստերով հայտնի ու ընդունված դիրքեր են.

(13)

ԵՌԱՇԱՐ ՀԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
ա. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐ			բ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԻՐՔԵՐ			գ. ՎԵՐՋԱՅԱՐ ԴԻՐՔԵՐ		
բարկ	պարկ	փառք	Գոբի	կոպի	կոփի	թաթ (կոմպ.)	տապ	տափ
դող	սող	թող	անողը	անտող	անոթը	կող	կոտ	կոթ
գող	կող	քող	վարգի	վարկի	վարքի	թագ	թակ	թաք
ջոջ	ճոճ	չոչ	աջար	աճառ	(ան)աչառ	քաջ	աճ	աչ
ծին	ծին	ցին (կոմպ.)	անձանց	անծանծ	անցանց	անձ	այծ	այց

²⁶ Նույն տեղում, էջ 410:

²⁷ Տես նույն տեղը, էջ 408:

(բ) Չափական սահմանագատման գործառույթ

Հայերենում այս գործառույթն ունի **հարացույցային** և **չարակարգային** դրսևորումներ. այն ազդարարում է ձևույթների եզրերը և ցուցաբերում է *հարացույցային համանմանություն*²⁸ երևույթներ: Հայերենում խորքային ձայնեղների շարքը բառավերջում մակերես է ելնում շնչեղացած և, ինչպես Գ. Ջահուկյանն է նկատում²⁹, հիմնականում՝ **ր**-ից հետո.

(14)

անհո/զ/ - անհո[թ]	սու/զ/ - սու[թ]
նուր/բ/ - նուր[փ]	եր/զ/ - եր[թ]
վար/դ/ - վար[թ]	ար/ջ/ - ար[չ]
վար/ծ/ - վար[ց]	օ/ծ/ - օ[ց]
մե/ջ/ - մե[չ]	օ/դ/ - օ[թ]

Կարելի է ենթադրել, որ վերջադիր ձայնեղ աղմկայինների շնչեղացումը կոկորդային հատկանիշների չեզոքացում է: Բացարձակ վերջահար դիրքում չարտոնված [ձայնեղ] հատկանիշի անջատման ժամանակ խորքային թույլ ձայնեղների շարքերը չեզոքանում են որպես թույլ խուլ հատույթներ (b→b̥): Թույլ հնչույթաբանական միջավայրերում որոշ կարևոր ազդանշաններ հնչյունաբանական տեղեկության մեջ բացակայում են: Հավանաբար, «շնչեղացման» մի շարք լեզուների նման, հայերենը ևս իրականացնում է վերջահար ուժեղացում՝ բառավերջում չեզոքացման ենթարկված եզրերն ամրացնելու նպատակով: Ձայնեղ պայթականների և պայթաշփականների չեզոքացման միջավայրերի մանրակրկիտ քննությունից պարզվում է, որ հայերենում [ծզված] հատկանիշը զուգորդվում (կապվում) է վանկասկզբի հետ: Բ. Վոքսի կողմից առաջարկվող «վերջահար ամրացումը» հայերենի դեպքում, այնուամենայնիվ, այնքան էլ ճշգրիտ որակում չէ³⁰: Դրա փոխարեն սույն հոդվածում առաջարկվում է կիրառել պարզապես «ամրացում» բառը, քանի որ վանկասկզբի դիրքերը ուժեղացվում/ամրացվում են և՛ բառավերջում (ինչպես արդեն քննարկվել է, հայերենում վերջնաբաղաձայնը վանկատվում է որպես վանկասկիզբ), և՛ բառամիջում: Անհրաժեշտ է նշել, որ ամրացման այս բավականին կանոնավոր գործընթացը պայմանավորված չէ որոշակի հատույթային միջավայրով: Ամրացման համար միջավայրը կարող է լինել *վերջադիր*՝ — # (տե՛ս (14)), ինչպես նաև *միջձայնավորական* կամ *միջձայնավորակերպ*³¹ (Ձ) (ասել է թե՛ ձայնավորներ, ձայնորդներ).

²⁸ **Հարացույցային համանմանություն** (Paradigm Uniformity). X հարացույցի անդամներից յուրաքանչյուրի համար ընդհանուր հանդիսացող μ (μ = morpheme) ձևույթի բոլոր մակերեսային արտահայտությունները Հ հատկության համար պետք է ունենան նույնական արժեքներ: *Հարացույցային համանմանությունը*, այսպիսով, առաջադրում է մի պայման, որի համաձայն տվյալ որոշակի հարացույցում որոշակի հնչյունային հատկությունը մնում է նույնական և հարացույցային մի միջավայրից մյուսն է անցնում անփոփոխ: Օրինակ՝ /երզ/ → [յերթ] → [յերթ]արան, [յերթ]արվեստ, [յերթ]իչ, [յերթ]չախումբ, քայլ[յերթ], օրհն[յերթ] և այլն:

²⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972:

³⁰ Տե՛ս Vaux, B., *The phonology of Armenian*. Clarendon Press. Oxford, 1998, էջ 239:

³¹ **Ձայնավորակերպը** (*Vocoid*) արտաբերության եղանակով, այսինքն՝ հնչյունաբա-

(15)

ՉԱՅՆԱՎՈՐ/ՉԱՅՆԱՎՈՐԱԿԵՐՊ – ՉԱՅՆԱՎՈՐ/ՉԱՅՆԱՎՈՐԱԿԵՐՊ					
օ./զ/ուտ	օ.[թ]ուտ	դա./դ/ար	դա.[թ]ար	համ./բ/ույր	համ.[փ]ույր
եր./դ/ում	եր.[թ]ում	ար./ծ/ա.կուրդ	ար.[ց]ա.կուրդ	օ./ծ/ա.ծուկ	օ.[ց]ա.ծուկ
ան./զ/ամ	ան.[թ]ամ	կեն./դ/ա.նի	կեն.[թ]ա.նի	դեր./ծ/ակ	դեր.[ց]ակ
ուր./բ/աթ	ուր.[փ]աթ	վար./ծ/ել	վար.[ց]ել	մար./զ/ա.րե	մար.[թ]ա.րե
մի./ջ/ին	մի.[չ]ին	ա.ռա./ջ/ին	ա.ռա.[չ]ին	ա.վա./զ/ա.նի	ա.վա.[թ]ա.նի

Շնչեղացումը առանձնացնում է վանկերի եզրերը և արմատային մակարդակում (ձևային ներսում), և բառակազմական մակարդակում (բառի/ձևային սահմաններից դուրս, ներառյալ բառակազմական գործընթացները): Օրինակ՝

(16)

ԱՐՄԱՏԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ
Վերջադիր վանկասկիզբ	Միջանկյալ վանկասկիզբ
բար./դ/ → բար.[թ]	բար.[թ]ել, բար.[թ]ու.թյուն
մու./զ/ → մու.[թ]	մը. [թ]ա.նալ, մը. [թ]ա. մորթ
վեր./ջ/ → վեր.[չ]	վեր.[չ]ա.վոր, վեր.[չ]ա.կետ
փոր./ծ/ → փոր.[ց]	փոր. [ց]ա.րան, փոր. [ց]ա. գետ

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, ամրացված վանկով ձևային ընդունում է հնչյունաբանորեն խրախուսվող (շնչեղացած) կառուցվածքի անփոփոխությունը և, ածանցման բնույթից անկախ, այն ընդհանրացնում, տարածում է հարացույցի մյուս ենթաձևայինների վրա: Այսպես, *օ/դ/* բառը իր հարացույցային շարքում մակերես է ելնում շնչեղացած՝ *օ[թ]*, և պահպանում է այս նույն հատկության բովանդակությունը ածանցման/բառաբարդման մյուս ձևերում. օրինակ՝ *օ/դ/* → *օ[թ]* → *օ[թ]ով* → *օ[թ]ային* → *օ[թ]աչու* → *օ[թ]անալ* → *օ[թ]անավակայան* և այլն:

(գ) *Չնչյունաբանական, թե՞ հնչույթաբանական շնչեղացում*

Ըստ Բ. Էլսոնի՝ U_1U_2 զուգորդություններում, որտեղ U_1 -ին հաջորդող U_2 հնչույթի արտաբերության տեղը տարբեր է U_1 -ի արտաբերության տեղից, խուլ պայթականների շնչեղացումը կրում է սոսկ հնչյունաբանական բնույթ: Նման միջավայրերում U_2 -ի հնարավոր հնչյունական դրսևորումները պայմանավորվում են նախորդող բաղաձայնի հատկանիշներով: Կից աղմկայինները ընդունում են օդի հոսքի բերանային արտամղման հատկությունները: Չայնաճեղքի տատանումների բացակայության դեպքում U_1 -ից U_2 -ին անցման ժամանակ օդի արտամղումը սովորաբար ընկալվում է որպես շնչեղացում: Այս երևույթն էլսոնն անվանում է «բաց անցում»³²: Չանապատասխան հնչյունական ձև ստանալու համար պարզ խուլ պայթական խմբերը, խոսքի ֆիզիոլոգիայով պայմանավոր-

նորեն սահմանված ձայնավորն է: Այն որոշակիորեն տարբերվում է հնչույթաբանական իմաստով ձայնավորից, որը սահմանվում է բառային ու վանկային կառույցներում իր ունեցած դերով: Այսպիսով, (r, j) հնչյունները ձայնավորակերպ են, թեև հնչույթաբանական տեսակետից դրանք համարվում են բաղաձայններ:

³² Տե՛ս Elson, B., Sierra Popoluca Syllable Structure. *International Journal of American Linguistics*, The University of Chicago Press, 1947, Vol. 13, № 1, էջ 16:

ված, ընդունում են [ծգված ձայնաճեղք] հատկանիշը.

(17) Ø – [+ծգված ձայնաճեղք] / [- ձգված ձայնաճեղք] – [- ձգված ձայնաճեղք]

Հայերենում նման «ընկալվող» շնչեղացումը, ըստ վերջինիս հնչույթաբանական գործառնությունների տրամաբանության, ամենայն հավանականությամբ նպատակ ունի ազդարարելու վանկի սահմանները: Օրինակ՝

(18)

տե/կ.տ/ոնական → տե[կ ^h .տ]ոնական	հո/կ.տ/եմբեր → հո[կ ^h .տ]եմբեր
պառա/կ.տ/ել → պառա[կ ^h .տ]ել	կա/պ. տ/ուկ → կա[պ ^h .տ]ուկ
եզի/պ.տ/ոս → եզի[պ ^h .տ]ոս	տրա/կ.տ/որ → տրա[կ ^h .տ]որ
պա/տ.կ/եր → պա[տ ^h .կ]եր	ա/պ.տ/ակ → ա[պ ^h .տ]ակ
ծ/պ.տ/ուն → ծ[պ ^h .տ]ուն	ղ/պ.տ/ի → ղ[պ ^h .տ]ի
կա/պ.կ/ել → կա[պ ^h .կ]ել	լ/կ.տ/ի → լ[կ ^h .տ]ի

(դ) Շնչեղության վերացում (զեղչում)


Ա₁Ա₂ զուգորդություններում ներծնության խորքային շնչեղ պայթյականները մակերես են ելնում շնչեղությունը կորցրած, եթե Ա₁-ը շփական է, իսկ ձայնեղ շփականները խլանում են.

(19)

նա/վթ/ → նա[ֆտ]	գա/ղթ/ → գա[խտ]	մե/ղթ/ → մե[խկ]
թու/ղթ/ → թու[խտ]	անհա/ղթ/ → անհա[խտ]	ճե/ղթ/ → ճե[խկ]

Շնչեղության վերացման կանոնը հետևյալն է.

(20)



Շփականներին հաջորդող աղմկայիններն ունեն [+ծգված ձայնաճեղք] առանց շնչեղանալու անհրաժեշտության³³: Կարելի է ենթադրել, որ [շնչեղ] հատկանիշի զեղչումը պայմանավորված է հնչյունական միջավայրով: Ուշադրության է արժանի այն փաստը, որ [շնչեղ] հատկանիշը պահպանվում է ներթափանցող ձևության ձայնաճեղքում: Օրինակ՝ **-թ** (որի պատմականորեն հոգնակիակերտ ձևությ լինելը քիչ թե շատ գիտակցվում է) կամ **-քան** վերջադիր բաղադրիչով բառերում շնչեղ խուլ բաղաձայններից առաջ խորքային ձայնեղ աղմկայինները խլանում են, սակայն, ի

³³ Տե՛ս Vaux, B., *Aspiration in English. Abstract.* Harvard University, University of Wisconsin, Milwaukee, 2002, էջ 3:

տարբերություն (19)-ուն բերված օրինակների, *ապաշնչեղացում* տեղի չի ունենում:

(21)

/աչ+ք/	[աչք]	/նզով+ք/	[նզոֆք]	/վազ+ք/	[վասք]
/քաջ+ք/	[քաչք]	/հավ+ք/	[հաֆք]	/այս+քան/	[այսքան]
/ոտ+ք/	[վոտք]	/աղոթ+ք/	[աղոթք]	/սող+ք/	[սոխք]
/զով+ք/	[զոֆք]	/ինչ+քան/	[ինչքան]	/այդ+քան/	[այտքան]

Կոկորդային առնմանություն

Հայերենում կոկորդային առնմանություն է տեղի ունենում ինչպես ներծնության միջանկյալ (CC), այնպես էլ ձևային սահմանագծերի գտնվող տարավանկ (C.C) զուգորդություններում: Աղմկայինների բոլոր զուգորդությունները կոկորդային հատկանիշներով համաձայնեցվում են: Վանկավերջ-վանկասկիզբ շարքերում աղմկայինների բաշխման սահմանափակումները բացատրելու համար կարևոր է հաշվի առնել տվյալ վերլուծության համար անհրաժեշտ հետևյալ հնչյութաբանական փաստերը:

1. Բոլոր VCCV զուգորդությունները ստանում են VC.CV վանկատում: Նկատենք, որ նույնավանկ C₁C₂ խմբերը անկախ C₂ բաղաձայնի բնույթից (պայթական, շփական կամ ձայնորդ) մշտապես մակերես են ելնում գաղտնավանկային ը-ով: Միակ CC բաղաձայնախումբը, որ առանց գաղտնավանկի է մակերես դուրս գալիս, C+J զուգորդությունն է՝ *գյուղ, հյուր, դյուրին, կյանք, բյուրեղ* և այլն: Այս կաղապարը չի համարվում ճյուղավորված վանկասկիզբ, այլ դիտվում է որպես քմայնացած մենահատույթ բաղաձայն:

(22)

* O N O	O N O
x x x x	x x x
գ j ուղ	գ' ուղ
h j ուր	h' ուր

2. Արմատային մակարդակում CC բաղաձայնախմբերը առանց բացառության տարավանկ դիրքեր են զբաղեցնում, հետևաբար նույնավանկ CC խմբերի ի հայտ գալը կարող է վկայել *բառակազմական մակարդակի* առկայության մասին:

3. Ընդհանուր առմամբ, բոլոր հիմնական հնչյունային փոփոխությունները տեղի են ունենում արմատային մակարդակում, և քանի որ հայերենում մի շարք այլ լեզուների նման աղմկայինները ցուցաբերում են *հարացույցային համանմանության*³⁴ հակվածություն, ուստի *արմատային մակարդակում* տեղի ունեցող փոփոխությունները տարածվում են հարացույցի մյուս մակարդակների վրա:


Չնայած հայերենի *վերջնաբաղաձայնները* խախտում են *ձայնեղու-*

³⁴ Տե՛ս Sturgeon, A., Paradigm Uniformity: Evidence for Inflectional Bases. *WCCFL 22 Proceedings*, 2003, էջ 464-476, Somerville, MA: Cascadilla Press:

թյան սահմանափակման պայմանը, բառամիջի բաղաձայնները կանոնավոր կերպով ենթարկվում են ձայնային առնմանության: Եթե [+ելք] գործողությունը շնչեղացման հետ տեղեկություն է տալիս վանկասկզբի աղմկայինների կոկորդային կարգավիճակի մասին, ապա բաղաձայնից առաջ ելքի պահի հայտնաբերելը գրեթե անհնար է³⁵: Նախաբաղաձայնական դիրքերը հայերենում սովորաբար զուգորդվում են վանկավերջի դիրքերի հետ: Նկատի առնելով այն փաստը, որ վերջիններս չունեն համապատասխան ազդանշաններ, վանկավերջի բաղաձայններում ելքի պահի բացակայությամբ տեղի է ունենում կոկորդային չեզոքացում:

Հայերենում կոկորդային առնմանությունը օրինաչափ *հետընթաց* բնույթ ունի.

(23)



Թե՛ բառամիջի և թե՛ բառավերջի Ա₁Ա₂ խմբերում Ա₁-ն ընդունում է Ա₂-ի կոկորդային հատկանիշը, ասել է թե՛ «վանկավերջը նմանվում է (կառավարող) վանկասկզբի մեջ առկա կոկորդային տարրին»³⁶: Խուլ աղմկայիններին նախորդող ձայնեղ աղմկայինները կորցնում են [ձայնեղ] հատկանիշը, օրինակ՝

(24)

օ/գտ/ակար	[կ/քտ]	մը/զկ/իթ	[սկ]	կե/դծ/	[խծ]
այ/դպ/իսի	[տ/թպ]	վար/ծկ/ան	[ծ/ցկ]	թե/վք/	[ֆք]
խա/բկ/անք	[պ/փկ]	օ/ժտ/ված	[շտ]	հու/ժկ/ու	[շկ]
մե/ջտ/եղ	[ճ/չտ]	փե/դկ/	[խկ]	զա/դտ/նիք	[խտ]

Առնմանությամբ *ձայնեղացման* դեպքերը համեմատաբար քիչ են և հիմնականում հանդիպում են ձևայինների սահմանագծերին՝

(25)

նա/խդ/իր	[դդ]	մա/կդ/իր	[զդ]
պա/տզ/ան	[դզ]	Մա/կբ/եթ	[զբ]
փա/կ #բ/երան	[զբ]	կե/ս#ժ/ան	[զժ]
ճ/շզ/րիտ	[ժզ]	ֆու/տբ/ու	[դբ]
կե/ս#զ/իշեր	[զզ]	մե/կ#դ/ար	[զդ]


Անկախ տիրույթների (արմատ, բառ, բառակապակցություն) սահմաններից՝ վանկաչափական մակարդակում հայերենի CC բաղաձայնախմբերը սովորաբար մակերես են ելնում տարավանկ դիրքերում: Սովորաբար, երբ վանկավերջի ձայնեղ պայթականը խախտում է *ձայնեղության սահմանափակման պայմանը*, ձայնեղության հատկանիշի անջատում է տեղի ունենում: Սակայն այս պայմանը որոշ դեպքերում այնուամենայնիվ խախտվում է: Ըստ Լոմբարդիի՝ խոսքն այն դեպքերի մասին է, երբ վանկավերջի աղմկայինը (Ա₁) զուգակցվում է իրեն հաջորդող ձայնեղ աղմկայինի (Ա₂)

³⁵ Տե՛ս Harris, J., նշվ. աշխ., էջ 201:

³⁶ Harris, J., Segmental complexity and phonological government. *Phonology* 7, 1990, p.

հետ. Երա կարծիքով, նման դեպքերում հատկանիշի տարածվելը «ստեղծում է կցորդված կառույցներ»³⁷:

(26)



Ա₁Ա₂ **ծայնեդ** բաղաձայնախմբերը միշտ մակերես են ելնում իրենց խորքային ձևերով: Կրկին, Ա₁-ը, վանկավերջի դիրքում լինելով հանդերձ, խլացման չի ենթարկվում: Այս դեպքում, սակայն, ակնհայտորեն չկա ո՛չ առնձանության, ո՛չ էլ տարածման երևույթ, քանի որ կոկորդայինների որակը բոլոր բաղաձայնախմբերում մնում է անփոփոխ կայուն: Չայնեդ արտասանությունն արտացոլվում է նաև ուղղագրության մեջ.

(27)

աղվես	[ղվ]	գովազդ	[զդ]	Աբգար	[բգ]
Վազգեն	[զգ]	աղջամուղջ	[ղջ]	կղզի	[ղզ]
բաղձանք	[ղձ]	կուղբ	[ղբ]	եզդի	[զդ]
լաջվարդ	[ջվ]	ազգ	[զգ]	մարզվել	[զվ]
Աղվան	[ղվ]	մաղձ	[ղձ]	լեզգի	[զգ]

Սովորաբար *պարտադիր ուրվագծի սկզբունքը*³⁸ նույն կոկորդային հատկանիշներն ունեցող կից աղմկայիններ չի հանդուրժում³⁹: Լոմբարդիի վերլուծությամբ ենթադրվում է, որ ստեղծվում է *երկակի կցորդված* կառույց, որտեղ որևէ կողմից անջատումն արգելվում է *կցորդման պայմանով*⁴⁰: Այսպիսով, վերը բերված օրինակներում գործ ունենք երկու նման կոկորդային հանգույցների *ծուլված* կաղապարների հետ: Ստորև ցույց է տրվում, որ հայերենի խորքային կառույցներում հնարավոր են նաև կից *խուլ* բաղաձայնախմբեր: Այս իրողությունը ենթադրում է, որ [±ծայնեդ] կցորդված կառույցները հայերենի հնչույթաբանության մեջ ընդունելի են.

(28)

դրա/խտ/	[խտ]	հե/շտ/	[շտ]
պա/տկ/եր	[տկ]	լ/կտ/ի	[կտ]
երա/շխ/իք	[շխ]	հա/սկ/	[սկ]
կա/պտ/ուկ	[պտ]	ա/ստ/ված	[ստ]
մար/տկ/ոց	[տկ]	մա/ճկ/ալ	[ճկ]

Վերթելզն ու Մասկարոն, հիմք ընդունելով իրենց համալեզվական ուսումնասիրությունների արդյունքները, եզրակացնում են, որ «լեզուների համար բնական է ունենալ նույնասեռ ձայնային հատկանիշներով բաղաձայնախմբեր, որոնք առաջանում են վերջիններիս ողջ խմբի վրա [±ծայ-

³⁷ Lombardi, L., նշվ. աշխ., էջ 31:

³⁸ Պարտադիր ուրվագծի սկզբունքի (Obligatory Contour Principle) համաձայն՝ նման կից տարրերը (հատույթներ, կառույցներ, տոներ և այլն) անընդունելի են:

³⁹ Տես Roca, I. & W. Johnson *A course in phonology*. Blackwell, UK, Cornwall, 1999, էջ 401:

⁴⁰ Ինքնահատույթային հնչույթաբանության մեջ *կցորդումը* (Linking) զուգակցումով միացված/կցված տարրերի միջև ստեղծվող որոշակի հարաբերությունն է, որը խնդրո առարկա հնչույթաբանական կառուցվածքում պարտադիր պետք է ունենա համաժամանակյա իրագործում:

նեղ] հատկանիշի մեկ կամ մյուս որակի տարածումով՝ սովորաբար հետընթաց կարգով»⁴¹: Հարկ է նշել, որ հայերենում բառերի ոչ մեծ խումբ, այնուամենայնիվ, դրսևորում է անկանոն կոկորդային վարքագիծ. խորքային ձայնեղ աղմկայինների որոշ զուգորդություններ մակերեսում վերածվում են համապատասխան նույնասեռ *խուլ* բաղաձայնախմբերի, օրինակ՝

զ/ղջ/անք →	[խճ]	Վար/դգ/ես →	[տկ]	ա/ղբ/յուր →	[խայ]
ամբո/ղջ/ →	[խճ]	ե/ղբ/այր →	[խայ]	չ/ղջ/իկ →	[խճ]
ա/ղբ/ →	[խայ]	դե/ղձ/ →	[խժ]	դա/ղձ/ →	[խժ]
ո/ղբ/ →	[խայ]	կիսախես/ղղ/ →	[խտ]	առո/ղջ/ →	[խճ]

Մինչև այժմ քննարկված կանոնները մակերեսային մակարդակում ձայնեղների զուգորդություններ կկանխատեսեին, մինչդեռ վերը բերված օրինակներում խնդրո առարկա բոլոր զուգորդությունները հնչյունաբանորեն խուլ են:

Համաձայն «պատմական» վերլուծության՝ հայերենում պայթականների ու պայթաշփականների համար *ղ-ից* (և *ր-ից*) հետո դիրքը համարվում է թույլ, քանի որ գործ ունենք «պատմականորեն ավարտված հնչյունափոխության հետ», որը «մեզ ավանդվել է»⁴²: «Դրանք ընդունված են և գործածվում են որպես այդպիսիք՝ կազմելով արտասանական նորմա»⁴³: Հարց է ծագում. ո՞րն է *չեզոքացում* երևույթի քննարկման մեջ «*ր-ի* և *ղ-ի* մոտ գտնված դիրքերին» առանձին անդրադառնալու իմաստը: Ի՞նչ սկզբունքով են բացառապես տարբեր բնական դասեր կազմող այդ բաղաձայնները քննարկվում միևնույն համատեքստում: Եվ, ի վերջո, ի՞նչ հնչյութաբանական կամ լեզվաբանական խնդիր է լուծվում՝ վերջիններս հատուկ քննության արժանացնելով: Ա. Խաչատրյանի աշխատության մեջ այս հարցերի պատասխանը հնարավոր չէ գտնել: Տպավորություն է ստեղծվում, որ այդպիսով ընդամենը փորձ է արվում «արդարացնել» արտասանական մի քանի «անկայուն» տարբերակների գոյությունը, որը, իհարկե, տեսական առումով անհասկանալի է: Արդեն նշված պատճառներով չանդրադառնալով *ր ձայնորդին* «մոտ գտնված դիրքերին»՝ փորձենք ցույց տալ, թե ինչով է անհիմն «*ղ աղմկային (Ա₁) + ձայնեղ աղմկային (Ա₂) միջավայրը հատկապես կապ չունի համապատասխան աղմկայինների խլացման հետ*» մոտեցումը:

Նախ՝ որպեսզի ընդունենք, որ *ղ-ի* դերը նման միջավայրերում էական է, և որ աղմկայինները խլանում են *ղ-ին* հաջորդելու պատճառով, պետք է ընդունենք (հետևելով Խաչատրյանին), որ տեղի է ունենում *առաջընթաց առնձանություն*, այսինքն՝ գտնվելով վանկավերջի դիրքում, *ղ-ն* ենթարկվում է թուլացման, ապա [- ձայնեղ] հատկանիշը տարածվում է նրան *հաջորդող* հատույթի վրա: Նման վերլուծությունն իհարկե լիովին տարբեր-

⁴¹ Wetzels, L. and J. Mascaro, The Typology of Voicing and Devoicing. *Language*, V. 77, № 2, 2001, p. 241.

⁴² Տե՛ս Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 101:

⁴³ Ի դեպ, հեղինակը նշում է նաև «գրային արտասանության» փաստը, միևնույն հնչյութաբանական միջավայրում հանդիպող ձայնեղ, ապա խուլ պայթականների առկայությունը: Վերլուծության մեջ հետևողականության բացակայության պատճառով վերջիններս չեն քննարկվում սույն հոդվածում:

վում է մինչև այժմ քննարկված դեպքերից: Նկատենք, որ Խաչատրյանն ինքն իրեն հակասում է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդ նույն աշխատության մեկ այլ էջում նա, այնուամենայնիվ, անուղղակիորեն հաստատում է հայերենում առնմանության *հետընթաց* բնույթը. «Ձայնեղություն/խլություն հակադրությունը չեզոքանում է մեկ այլ բաղաձայնից առաջ, ընդ որում չեզոքացվող հնչյունի որակը պայմանավորված է **հաջորդ** բաղաձայնի որակով. եթե վերջինս խուլ է, ապա չեզոքացվող հնչյու-թը խլանում է, իսկ եթե ձայնեղ՝ ձայնեղանում է»⁴⁴ (ընդգծումը իմն է - Յ.Յ.):

Հայերենի աղմկայինները ուսումնասիրված նախորդ բոլոր դեպքե-րում ցուցաբերում են կանոնավոր *հետընթաց առնմանություն*, և խախ-տել այդ օրինաչափությունը սոսկ **դ+ձայնեղ Ա** կաղապարի համար *առա-ջընթաց առնմանություն* ներմուծելու նպատակով՝ առնվազն անհիմն է:

Առաջին տեսականորեն անտրամաբանական ու անհավանական է, որ միևնույն հնչյութաբանական միջավայրում առնմանության երկու ձևերն էլ հավասարաչափ վավերականություն ունենան. մի դեպքում վանկավերջի *դ-ն* հետընթաց առնմանության թիրախ է դառնում, մյուս դեպքում՝ *դ-ն* ինքն է ա-ռաջընթաց հերթագայության պատճառ հանդիսանում:

Երկրորդ՝ եթե *դ-ն* իրոք առնմանության մեջ գործուն դեր ունենար, ապա (27)-ում ևս բոլոր համապատասխան *դ+ձայնեղԱ* խմբերը պետք է վերածվեին նույնասեռ խուլ զուգորդությունների: Սույն հոդվածում ենթա-դրվում է, որ (29)-ի օրինակները (27)-ից տարբերվում են նրանով, որ առա-ջինները չեն ենթարկվում *ծուլման*⁴⁵, այլ բաղաձայնախմբերի երկրորդ բա-ղաձայններն ամրանում են՝ շնչեղացման միջոցով ազդարարելով իրենց զբաղեցրած վանկասկզբային դիրքերը: Ուժեղացման/շնչեղացման ար-դյունքը հստակորեն երևում է այն *դ+Ա [+ձայնեղ]* զուգորդություններում, որտեղ աղմկայինները պայթաշփականներ են (/ղջ/ կամ /ղձ/): Ուժեղանա-լով դրանք վերածվում են իրենց համարժեք շնչեղ խուլերի՝ /ջ/→[ջ] և /ձ/→[ց]: *Ղ+ձայնեղ* պայթականները արտաբերվում են որպես ոչ շնչեղ խուլեր: Սա կարելի է բացատրել զուտ հնչյունաբանական միջավայրով (տե՛ս (19)-ում բերված օրինակների վերաբերյալ քննարկումը⁴⁶): Այս ամե-նից հետո միայն *դ-ն*՝ որպես սովորական վանկավերջ, չեզոքանում է: Հե-տընթաց առնմանության կանոնների համաձայն՝ այն ընդունում է հաջոր-դող վանկասկզբի կոկորդային կարգավիճակը: Այս գործընթացն ավելի տեսանելի կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

(30)

1. Մուտքային բառ	ա.	/աղջիկ/	բ.	/եղբայր/
2. Վանկատում		/աղ.ջիկ/		/եղ.բայր/
3. Ամրացում (վանկասկիզբ)		աղ.[ջ]իկ		եղ.[ա]այր
4. Հետընթաց առնմանություն		ա[խ.ջ]իկ		ե[խ.ա]այր
5. Ելք /Արդյունք		[ախջիկ]		[յեխպայր]

⁴⁴ Տե՛ս **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 104:

⁴⁵ **Չուլումը** (*Fusion*) հնչյութաբանական գործընթաց է. լեզվաբանական որոշակի կառույցներում գտնվող հաջորդական հատույթները միանում են, միաձուլվում՝ կազ-մելով մեկ ամբողջական հատույթ:

⁴⁶ Հնչյունաբանական տեսակետից շնչեղ և ոչ շնչեղ խուլ պայթականները հայե-րենում հերթագայելի են և որոշակի միջավայրերում հանդես են գալիս որպես ընդիա-նուր կարգի տարբերակներ:

Ձայնորդները կոկորդային գործընթացներում

Աղմկային-Ձայնորդ (ԱՁ) զուգորդությունները հայերենում սահմանվում են վանկատման կանոններով, որոնք խստորեն վերահսկվում են *հնչեղության հաջորդականության սկզբունքով*: ԱՁ խմբերը, որպես կից հատույթներ, մակերես են ելնում միայն վանկերի սահմանագծերին, այսինքն՝ երբ տարբեր վանկերի են պատկանում: *CC վանկասկզբի սահմանափակումը* արգելում է նույնավանկ կից ԱՁ զուգորդությունների առկայությունը: Այդպիսով, վանկերի ներսում դրանք հանդես են գալիս միայն գաղտնավանկային ը-ով:

(31)

ՏԱՐԱՎԱՆԿ ԱՁ ԽՄԲԵՐ		ՆՈՒՅՆԱՎԱՆԿ ԱՁ ԽՄԲԵՐ	
/ԱՁ/բառ → [Ա.Ձ]		/ԱՁ /վանկ → [ԱրՁ]	
/տա գ նապ/ →	[տա գ .նապ]	/գ ն դակ/ →	[գ ն .դակ]
/օթ յ ակ/ →	[օթ յ .ակ]	/բռ ռ ակ/ →	[բռ ռ .ակ]
/մեղ ր ամոմ/ →	[մեղ ր .ամոմ]	/անջ ր պետ/ →	[ան.ջ ր .պետ]
/տա տ րակ/ →	[տա տ .րակ]	/րնկ ր կում/ →	[րն.կ ր .կում]

Ձայնորդները կոկորդային առնմանության չեն ենթարկվում: Սա պայմանավորված է **ԱՁ** միջավայրերի առանձնահատկություններով: *Ձայնեղ – պարզ խուլ – շնչեղ խուլ* տարբերակումները պահպանվում են թե՛ վանկամիջում և թե՛ վանկերի սահմանագծերին: Այսպիսով, նախաձայնորդական աղմկայինների [+ձայնեղ] հատկանիշն արտոնվում է միջանկյալ և վերջապես վանկավերջերում.

(32)

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՎԱՆԿԱՎԵՐՋ		ՎԵՐՋԱՅԱՐ ՎԱՆԿԱՎԵՐՋ	
ա[գ].նիվ	չա[ղ].լիկ	դյուցա[գ]ն	մե[ղ]մ
հե[գ].նանք	ծան[ծ].րույթ	կա[ղ]ր	մե[ղ]ր
սա[ղ].մոս	ա[ղ].րենալին	վա[գ]ր	թան[ծ]ր
Ա[բ].րահամ	կենտա[վ].րոս	Հա[ջ]ն	մա[վ]ր

Հնչյունաբանական ու հնչույթաբանական տարբեր միջավայրերում աղմկային բաղաձայնների հետագա ուսումնասիրությունը՝ հիմնված նրանց կոկորդային որոշակի վարքագծի, շնչեղացման/չեզոքացման փաստերի վրա, կարող է նպաստել լեզվական ու լեզվաբանական այլ իրողությունների բացահայտմանն ու հիմնավորմանը:

Բանալի բառեր – *հնչույթաբանություն, հնչյունաբանություն, վանկաչափություն, կոկորդային վարքագիծ, աղմկային բաղաձայններ, հատույթային կարգավիճակ, շնչեղացում, յամբական ոտք, հարացույցային համանմանություն, եռաշար հնչյունային համակարգ*

АСМИК ОГАНЕСЯН – *Ларингиальное поведение шумных согласных в армянском языке: аспирация и слоговые границы.* – В армянском языке существует трёхчленная оппозиция согласных фонем, в силу чего имеется огромное количество морфемных противопоставлений. Во избежание недоразумений приме-

няются особые фонологические и фонетические механизмы. С просодической точки зрения укрепление/усиление шумных согласных в определённых перифериях морфемы или слова становится показателем морфемных границ и слогоначальных позиций.

Ключевые слова: *фонология, фонетика, просодия, ларингальное поведение, шумные согласные, сегментальный статус, аспирация, ямбическая стопа, парадигматическая однородность, трёхчленная звуковая система*

HASMIK HOVHANNISYAN – *Laryngeal Behaviour of Obstruents in Armenian: Aspiration and Syllable Boundaries.* – Armenian is a language with three-way phonation types. As a result, the language comes out with vast morphological contrasts. In their efforts to maintain the relevant contrasts and reduce the chances of miscommunication to a minimum, native speakers of Armenian employ certain phonological and phonetic mechanisms, viz. [voice] is licensed utterance-finally as well as final environments are enhanced by adding [+spread glottis] feature to obstruents. Prosodically, fortition is motivated as an edge-marker of morpheme boundaries and syllable-initial positions. Any sound changes (through aspiration) at Word Level are uniformly extended to other levels of derivation, showing Paradigm Uniformity effects. O₁O₂ contexts undergo regressive assimilation. Both ‘voiced’ and ‘voiceless’ assimilation is reported in Armenian. In this paper laryngeal facts have been analysed in terms of the two main licensing approaches: Licensing by Cues and Licensing by Prosody. With this in view, laryngeal realities in Armenian might offer fertile ground for further thorough research.

Key words – *phonology, phonetics, prosody, laryngeal behaviour, obstruents, segmental status, aspiration, iambic foot, Paradigm Uniformity, three-way phonation system*